ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 3085-Ա « 31 » հուլիսի 2025 թ.

ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ՓՈՂՈՑ Հ.17 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԹՈՒՐ ՌԱԴԻԿԻ ՕՀԱՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արթուր Ռադիկի Օհանյանի (ծնված 26.07.1966թ.) 18.04.2023թ. հ.Դ-45928-23 դիմումը: Երևան, Կենտրոն, Ռուսթավելու փողոց հ.17 հասցեում գտնվող, ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 120.1քմ, որից՝ 58.0քմ սեփականության իրավունքով պատկանող հողամաս է, իսկ 16.0քմ՝ վարձակալության իրավունքով պատկանող հողամաս է, որը ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի ուժով հանդիսանում է սեփականության իրավունքով փոխանցված հողամաս (ըստ կտակի ժառանգության իրավունքի 30.04.2022թ. հ.9824 վկայագիր):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 13.02.2024թ. հ.Հ-648 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 18.06.2025թ. հ.20-Ել-45928-23 եզրակացությունը, համաձայն որի Երևան, Կենտրոն, Ռուսթավելու փողոց հ.17 հասցեի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1. Վերականգնել Երևանի Կենտրոն, Ռուսթավելու փողոց հ.17 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Արթուր Ռադիկի Օհանյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 74.0քմ մակերեսով հողամասին կից 46.1քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 46.1քմ մակերեսով հողամասի (որից՝ 10.0քմ ընդհանուր համատեղ սեփականություն է Փառանձեմ Ավոյանի, Դավիթ Ավետիսյանի, Նունե Ավետիսյանի, Թագուհի Ավետիսյանի հետ) և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

5.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ